

ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅԱՍՏԻՐ ՄԸ



վհեանձն ու ազնուական սիրտեր երախտագիտութիւն կը հրաւիրեն վրանին:

Հաճոյքով կը ներկայացնենք իր օրինակելի տիպար մը այս մասին՝ քաղաքիս Միրանաւոր Պատրիարքը, Միաբանութեան հազուագիւտ բարեկամը, որ մասնաւոր համակրանք մ'ունի Հայերու հանդէպ, ու ամէն պատեհութիւններէն կ'օգտուի իր այս զգացումը յայտնելու համար, թէ՛ հրապարակային և թէ՛ առանձնական ցոյցերով:

Երկու տարի առաջ, պատերազմներու դադարման առթիւ, Ս. Մարկոս եկեղեցիին մէջ տեղի կ'ունենար գոհարանական հանդէս մը, ուր բարձրաստիճան Հանդիսադիրը չի մոռնար իր պերճախօս բեմասացութեան մէջ ճոխ բաժին մը յատկացնելու Հայերու բնաջնջումին համար ծրագրուած սաղայելական սպանդներուն, ի վեր հանելով մեր մարտիրոս ժողովուրդին գերակշիռ արժանիքը բոլոր քաղաքակիրթ ազգերու շարքին մէջ:

Պատրիարքին ազնիւ զգացումներն աւելի ցայտուն երևցան՝ երբ ահռելի կոտորածներու զոհերէն 60ի չափ ծնողազուրկ մանուկներ ու պատանիներ Պոլսէն փոխադրուելով մէկ ու կէս տարի առաջ՝ Միաբանութեան խնամքներուն առարկայ դարձան: Առաջին անգամ զանոնք տեսնալուն՝ այնքան գորովեցաւ որ բաւ չի համարեց կարծես ընծայիկներն ու արտապնդիչ խօսքերը, վրան զի անկէ ասդին ալ չի դադրիր տեսակցութեան առիթներ ստեղծելէ: Չէ՞ մի որ ասոնց եղած սէրն ու յարգանքը՝ մեզի ու Ազգերնուս կը պատկանի:

Արեւելասէր ըլլալով և Ս. Աթանասի մարմինը քաղերս մէջ գտնուելուն առթէն օգտուելով, ուզեց որ Աղեքսանդրոյ Հայրապետին տօնը փառաւորութեամբ կատա-

րուի, և Նորին ինդրանքին համաձայն՝ ամէն տարի նոյն օրը Մխիթարեանք հայ ծէսով հանդիսաւոր Ս. Պատարագ կը մատուցանեն Ս. Զաքարիա եկեղեցիին մէջ, ինչ որ այս անգամ ևս տեղի ունեցաւ իր ներկայութեանը, Մեր պգտիկներն օրուան հանդիսութեան պատկը կը յօրինէին հոն իրենց հրեշտակային գեղգեղանքներով, երբ ծրանեզարդ Հովիւր բեմ կ'ելլէ և Արեւելեան Եկեղեցւոյ փառքերը մի առ մի դրուատելէ ու Հայուն այս օրուան չարակրութիւնները Գրիստոնէութեան նախկին հաւածանքներուն հետ բաղդատելէ ետքը, ցոյց կու տայ թրքական խղճութեանց զոհերուն այս բեկորները՝ հազիւ ճողոպրած մարդակերպ զազաններու ճիրաններէն, ու կը նկարէ արգահատանքի և յարգանքի արժանի կացութիւնին այնպիսի յուզումնառիթ շեշտերով՝ որ համախմբուած բազմութենէն շատերու աչքերը կը լճանան արցունքով:

Բայց այս եկեղեցականը աւելի յատկանշական եղած է իր առանձնական համակրելի վերաբերմունքներով, որոնցմէ մին միայն յիշելով պիտի բաւականանանք:

Օգոստոսի առաջին օրն էր՝ երբ հայերենիքին այս աւանդները, ամիսէ մը ի վեր, կը գտնուէին Ս. Չնոնի մեր դրախտանման ամարանցը: Էւ ահա յատուկ ինքնաշարժով յանկարծ հոն կ'երևի Միրանաւորը, որ կանխաւ խոստացած էր մեզ պատուել՝ մերձակայ ուրաւական եկեղեցւոյ մը հանդիսութեան առթիւ: Պատշաճօրէն կը հիւրասիրուի, սիրալիւ խօսակցութիւններ կը փոխանակուին երկուստեք, և ինք մեր սանուկներէ իւրաքանչիւրին գուրգուրալի խօսքեր ու ընծաներ բաժնիլէ զատ, իրեն տրուած ճաշկերոյթի պահուն կը կարգայ ասոնց ուղղուած հետեւեալ ոտանաւոր մաղթանքը, զոր հոս կը ներկայացնենք հայերէն թարգմանութեանը հետ:



Վեճեակոյ Միրամաւոր Պատրիարք՝ Պետրոս Լա-Ֆոնթէն

AGLI ORFANI ARMENI

Ո Ւ Ղ Ե Ր Զ

Accolti dai PP. Mechitaristi in S. Lazzaro
di Venezia

Մխիթարեան Հայրերու կողմէն Ս. Ղազարու մէջ
ընդունուած Հայ Որբերուն

✠

✠

Cieco furor, di non amica razza
lacrime e sangue da voi pretese;
mai dolce una parola; affanni, offese
e il grido distruttore: «ammazza, ammazza».

Մոլուցքը կոյր ոչ բարեկամ մէկ ցեղին
Արիւն արցունք կը պահանջէր միտ ձեզմէ,
Ոչ մէկ անուշ խօսք, տառապանք, նախատինք
Եւ աւերիչ աղաղակ. «Ջարկ, ըսպանէ՛»:

Poveri Agnelli! mentre Europa pazza,
lo scempio vostro indifferente apprese,
vita e virtude, ahime! vi fur contese;
beveste il fondo de l'amara tazza.

Հէ՛ք զառնուկներ, մինչ խելագար Եւրոպան
Ձեր ըսպանդին տեղեկացաւ անտարբեր,
Կեանքի, պատուոյ համար, աւա՛ղ, կըռուեցաք,
Լիզի բաժակը քամեցիք ջրյատակ:

Ma Dio pietoso vi guardava: il letto
vi preparava in mezzo a la Laguna,
allor che Mechitar, spirito eletto,

Բայց բարեգութիւն ըզձեզ Աստուած կը դիտէր,
Լըճակիս մէջ կը պատրաստէր ձեզի տուն՝
Յորմէհետէ ընտրեալ հոգին Մխիթար

La gente sua tra noi chiama e raduna.
Agnelli, in questo ovile benedetto
dormite quieti: qui piena è la luna.

Կը ժողովէ մեր մօտ զաւակներն իր Ազգին:
Հապա, Գառներ, մէջն այդ օրհնեալ փարախիդ
Քնացէ՛ք հանգիստ, լիալուսին է այդ տեղ:

Il Patriarca con grande affetto.

1 Agosto 1920

ՄԵՆ ԳՈՐԱՎԱՅՈՎ ՊԱՏԻԱՐԿԸ

1 Օգոստոս 1920

Հ. Թ. Թ.

ՄԱՂԱԿԵՊԱՍԱԿՆԵՐ

Երբոր կ'իյնաք, ո՛վ աղէկներն իմ ցեղիս,
Ճամբաներու արեւմտադանդ դաշտին մէջ,
Ձեր մերկութիւնը կը սքզդեմ ես անշէլ
Այրեցաւոր ալքերուն մէջ իմ սըրտիս,
Ու կ'երազեմ, անհունօրէն տըխրանակ,
Շուշաններուն անըծութիւնը ձերմակ:

Ո՛վ Մայրութեան ծոցէն խըլուած բողբոջներ,
Որո՞ք արեւ չի տեսած մահացած,
Իմ հոգիիս դադաղին մէջ՝ ցիրուցան
Ձեզ կ'ամփոփեմ, ո՛վ լուսաճիւղ մեռնիք,
Ու կ'երազեմ խորշակաւոր վարդերուն
Գեղեցկութիւնը ցաւազին և անհուն:

Ո՛վ դուք, Որբերը մահատիպ ու թըշուառ,
Ձեզ արցունքին մարգարիտները կ'իյնան
Աստեղավառ միջոցներէն անասման:
Ես ձեր անգուն ունիմ արտիս մէջ խաւար,
Ու կ'երազեմ արեգակի ծաղկներ
Ձօր մտայլ գէշերն է թանձրօրէն պատանքեր:

Ո՛վ կըտրեմներն աստեղաբիւր, որ հրակայ
Ընդվըւմամով մը խեցիք շանթն երկնքին,
Երբ ձեր վերքերը հրահոսան կը ծաղկին
Մայր հողին մէջ, ուր հունձքերուն ապագայ
Միբանեփառ արշալոյսն է բեղմնալիք,
Եւ կ'երազեմ վառ կակշիները կարմիր...

Երբ անվըլանք՝ ոճիբին գէժ ծառացած,
Աղատութեան դիցադուններ արեգգէժ,
Դէպի կըտի՛ խոյանքը ձեր կը գիտեմ,
Ու ձեր մաներն արշալոյսով պըսակուած,
Ես կ'երազեմ դալարազեղ դափնիներ
Որո՞ք ամբողջ Հայրենիքիս մեկնանին
Տըխրատեսիլ աւերակներն են ծածկեր:

Ու կ'երազեմ արիւնաներկ ժիրանին
Որուն հրաշող ծալքերուն մէջ աղալաւտ
Պիտի նընէ՛ք Անմահութեան փառքին հետ...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՅ